ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

ԼԱԼԱ ՍԻՄՈՆՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան
Էլ. հասցե՝ simonyanlala-phd24@aspu.am

DOI: 10.24234/scientific.v1i51.312

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է մշակել սովորողների գեղագիտական զգացմունքների ձևավորվածության մակարդակն արտահայտող ցուցիչներ, որոնք թույլ կտան գնահատել աշակերտի հուզական-արժեքային վերաբերմունքը երաժշտության նկատմամբ:

Ուսումնասիրելով առարկայի չափորոշիչը, ծրագիրը և դասագրքերի բովանդակությունը, տեսնում ենք, որ ուսումնական նյութերն ապահովում են սովորողների գեղագիտական զգացմունքների ձևավորման համար անհրաժեշտ տեսական նյութ, գործնական առաջադրանքներ, սակայն երաժշտության ուսուցչի համար չկան դրանց չափման և գնահատման ցուցիչներ: Օգտվելով ժամանակակից հոգեբանական և մանկավարժական հարուստ փորձից, մենք մշակել ենք գեղագիտական զգացմունքի ձևավորման կառուցվածքային բաղադրիչների՝ հուզական արձագանքի և ապրումակցման, գեղագիտական ընկալման, գնահատման և դատողության չափումների համար ցուցիչներ, որոնք օգտակար կլինեն առարկան դասավանդող ուսուցչին ուսուցման գործընթացում:

Հոդվածի շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիմնական ձեռքբերումներն են երաժշտության դասերին գեղագիտական զգացմունքների ձևավորման հիմնական ցուցիչների մշակումը, դրանց իրականացման համար առաջարկվող տարբեր մեթոդական հնարները, որոնք թույլ են տալիս ուսուցչին ախտորոշել և զարգացնել աշակերտների հուզական արձագանքը և ընկալման մակարդակը երաժշտական երկերի նկատմամբ: Առաջադրված ցուցիչները կարող են ծառայել որպես ուղեցույց հանրակրթական դպրոցների երաժշտության ուսուցիչների համար՝ դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Բանալի բառեր՝ *երաժշտություն, գեղագիտական զգացմունք, հույզ, գեղագիտական ընկալում, ցուցիչ, դեռահաս, ընկալում, գնահատում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գեղագիտական զգացմունքների կառուցվածքային համալիր բնույթը վկայում է, որ դրանք չափելու համար մեկ կամ երկու չափման մեթոդները բավարար չեն, չնայած, որ շատ հեղինակներ առաջնորդնվել են միայն մեկ բնույթի չափման ցուցիչներով կամ կիրառել են մեկ տեսակի հարցարան: Հատկապես արվեստի՝ այս դեպքում երաժշտության հետ համատեղ միավորման արդյունքում մեզ անհրաժեշտ էին դիտարկել ինչպես հոգեբանական, գեղագիտական պայմաններում, այնպես էլ երաժշտական արվեստի համատեքստում զգացմունքների առաջացման և որոշակի գործունեության արդյունքում դրանց չափման մեթոդները: Մեր կողմից ուսումնասիրվել են մի շարք չափողական ցուցիչներ գեղագիտական փորձառության ոլորտում, որոնց հուսալիությունն ու արդյունավետությունը փորձարարական ճանապարհով ստուգվել և ապացուցվել է ժամանակակից հոգեբանության անվանի ներկայացուցիչների կողմից: Հանրակրթական դպրոցի երաժշտություն առարկայի ուսուցման գործընթացում դեռահասների գեղագիտական զգացմունքների չափման համար առկա տարբեր մեթոդների հիման վրա մեր կողմից մշակվել է դրանց չափման ցուցիչների համալիր համակարգ՝ համապատասխան մեր հետազոտության նպատակների, որը ներկայացվում է սույն ենթագլխում: Ելնելով գեղագիտական զգացմունքների ձևավորման մոդելի բազմագործոն ուղղվածությունից, պարզ է դառնում, որ մենք չափում ենք մի քանի բաղադրիչներ: Այստեղ կարևոր է ոչ միայն հուզական վերաբերմունքն ու արձագանքը երաժշտությանը, այլև գեղագիտական ընկալման մակարդակը, գնահատողական կարողությունն ու իմաստավորումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ նորմատիվային և ուսումնական փաստաթղթերի բովանդակային վերլուծություն, տեսական աղբյուրների և ժամանակակից հոգեբանական և մանկավարժական փորձի ուսումնասիրություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երաժշտություն առարկայի բաղադրիչները (երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, նվագարանների կիրառում, ունկնդրում և իմպրովիզացիա) հնարավորություն են տալիս տեսնել և չափել գեղագիտական զգացմունքների առկայությունն ու դրանց ուժգնության սահմանը տարբեր գործընթացներում: Սա էլ ապահովում է երաժշտության ակտիվ ուսուցումը, քանի որ, որքան սովորողն ակտիվ հարաբերակցության մեջ է առարկայի ուսուցման ընթացքում, այնքան ավելի շատ և ավելի լավ են գործի դրվում նրա զգացմունքները:

Հասկանալու համար, թե որքանով է սովորողը հուզական առումով ընդգրկվել դասապրոցեսի մեջ, նախ կատարում ենք դիտարկում, որը հնարավորություն է տալիս գնահատել դասարանի հուզական ներգրավվածությունը հետևյալ ուղղություններով.

- ուշադրությունը դասի ընթացքում,
- վարքային դրսևորումներ և դեմքի արտահայտություն,
- քննարկումներին մասնակցություն,
- գեղագիտական տերմինների կիրառում:

Ամբողջ դասարանի ընդհանուր ներգրավվածության ախտորոշման համար ընտրում ենք 4-5 հոգանոց ֆոկուս խմբեր և ժամանակ առ ժամանակ կենտրոնանում խմբերից յուրաքանչյուրի վրա: Յուրաքանչյուր ուղղության համար սահմանվում են հետևյալ բաղադրիչները, որոնց առկայության կամ բացակայության մակարդակը որոշում ենք 0-3 թվային ցուցիչներով.

Դրսևորում	**Գնահատում**
Ցուցաբերվում է ակտիվ ներգրավվածություն, սովորողները սիրով հետևում են դասապրոցեսի ընթացքին, լիովին ձուլվում երաժշտության հետ և արձագանքում ու ապրումակցում են երաժշտական նրբերանգներին: Ակտիվ մասնակցում են քննարկմանը և կարողանում են ներկայացնել իրենց զգացմունքներն ու ապրումները:	3 - ԲԱՐՁՐ
Սովորողները ներգրավված են դասապրոցեսին, սակայն երբեմն շեղվում են կամ չեն կարողանում ձուլվել երաժշտության հետ: Կա հուզական ապրումակցում երաժշտության հանդեպ, բայց զգում են միայն պարզ հույզեր, չորսալով գեղագիտական նրբերանգները: Քննարկման ժամանակ չեն կարողանում բացատրել զգացմունքները կամ արտահայտում են դրանք միայն պարզ բառերով (ուրախություն / տխրություն և այլն):	2 - ՄԻՋԻՆ
Նկատվում է ընկալման և դասապրոցեսին մասնակցության պասիվ դրսևորում, սովորողները հաճախ շեղվում են և ձանձրանում գործընթացից: Դժվարանում են ընկալել երաժշտական գեղագիտական իմաստները և դրսևորել դրանց հանդեպ իրենց հույզերը: Խուսափում են մասնակցել քննարկումներին:	1 - ՑԱԾՐ

Դասապրոցեսի վերաբերյալ անտարբեր վերաբերմունք, հուզականության կատարյալ բացակայություն և խուսափում բոլոր տեսակի գործընթացներից: Ոչ մի կերպ չեն մասնակցում քննարկումներին:	0 - ՉԵՋՈՔ

Աղյուսակ 1.

Դասարանի ընդհանուր հուզական և երաժշտա-գեղագիտական ընկալման մակարդակն ախտորոշելուց հետո կիրառում ենք հարցարաններ սովորողների գեղագիտական զգացմունքները յուրաքանչյուր սովորողի համար ճշգրիտ չափելու նպատակով:

V-VII (10-12 տարեկաններ՝ նախադեռահասություն) դասարանների սովորողների գեղագիտական զգացմունքների չափման համար մենք ստեղծել ենք գրաֆիկական պատկերներ մարդուկների տեսքով, որոնցից յուրաքանչյուրի դեմքի արտահայտություն ցույց է տալիս որոշակի զգացմունքային վիճակ (Шестова, 2024): Ընտրվել են գեղագիտական զգացմունքների բոլոր տեսակի (դրական, բացասական, ճանաչողական և այլն) խմբերին պատկանող հույզերից մի քանիսը, որպեսզի վերլուծելիս պարզ դառնա, թե որ տեսակն է ավելի գերակշռում և արդյոք համապատասխանում է երաժշտության բնույթին: Ավելի պարզ դարձնելու համար մենք յուրաքանչյուր մարդուկի գլխավերևում տալիս ենք հուշում, թե կոնկրետ որ զգացմունքի հետ է կապված նրա դեմքի արտահայտությունը: Սովորողները երաժշտական գործունեությունից (ունկնդրում, երգեցողություն և այլն) հետո ընտրում են այն պատկերները, որոնց համապատասխանում էր երաժշտությունը կամ, որոնք ավելի մոտ էին իրենց սեփական զգացմունքներին: Նրանք հնարավորություն ունեն ընտրելու մի քանի տարբերակներ, որոնց շնորհիվ կարող ենք որսալ խառը գեղագիտական զգացմունքները, ընդ որում՝ դրականն ու բացասականը միաժամանակ: Մարդուկների ներքևի հատվածում աշակերտները պետք է ընտրեն նաև 1-3 թվերից որևէ մեկը, որոնք ցույց են տալիս զգացմունքի ուժգնությունը. 1՝ թույլ, 2՝ միջին, 3՝ ուժեղ: Սա թույլ է տալիս որոշել յուրաքանչյուր զգացմունքի ինտենսիվության մակարդակը (Шестова, 2024):

Օրինակ՝



VIII-IX դասարանների սովորողները, որոնք արդեն իսկ ավելի գիտակից են և ունեն ավելի հստակ ձևավորված երաժշտական ճաշակ և նախասիրություններ, կարող են կողմնորոշվել երաժշտական ժանրերի հարցում, ընտրելով իրենց զգացմունքային դաշտին և հոգեվիճակին առավել մոտ ստեղծագործությունները: Նրանց հուզական արձագանքի չափման համար մենք առաջարկում ենք հետևյալ միջոցը: Որպես ունկնդրման նյութ միացնել տարբեր ժանրերի ստեղծագործություններ, օրինակ՝ դասական, այնուհետև՝ ռոք ժանրի ստեղծագործություն: Մեր կողմից ընտրվել են ստեղծագործություններ, որոնք աչքի են ընկնում զգացմունքային խորը բնույթով, ակնհայտ երաժշտական կերպարներով, որոնք միանգամայն կհետաքրքրեն այս տարիքի սովորողներին: Դրանք են՝

դասական – Լյուդվիգ վան Բեթհովեն – Սիմֆոնիա թիվ 5, 1-ին մաս

ռոք – Queen – Bohemian Rhapsody

Առաջին ստեղծագործության տվյալ հատվածը կոմպոզիտորի կողմից անվանվել է «Ճակատագրի» թեմա, որը միանգամից ընկալվում է ունկնդրի կողմից: Այն ունի վեհ բնույթ, որը, կարծես, մարդու և իր ճակատագրի պայքարն է խորհրդանշում:

Երկրորդ ստեղծագործությունը ռոք ժանրի հիանալի գլուխգործոցներից է, որն իր մեջ կրում է դասական ժանրի տարրեր, օպերային հատվածներ: Այն անմիջական կապ ունի անձնական կյանքի, ապրումների, հուզական վիճակի, սեփական ճակատագրի ընդունման և գիտակցման հետ:

Երկու ստեղծագործությունների ունկնդրումից հետո սովորողներին տրվում է հարցարան, որը նպատակ ունի բացահայտել հուզական արձագանքի և երաժշտական-գեղագիտական ընկալման մակարդակը երկու տարբեր ստեղծագործությունների միջոցով: Հարցարանը կազմված է հետևյալ ձևով.

Լյուդվիգ վան Բեթհովեն – Սիմֆոնիա թիվ 5, 1-ին մաս	**Queen – Bohemian Rhapsody**
Երաժշտությունը լսելիս ես զգացի …..	Երաժշտությունը լսելիս ես զգացի …..
Ես ուզում եմ այս ստեղծագործությունը կրկին լսել / չլսել, քանի որ…	Ես ուզում եմ այս ստեղծագործությունը կրկին լսել / չլսել, քանի որ…
Ստեղծագործությունը լսելիս մտքումս եկան հետևյալ պատկերները…	Ստեղծագործությունը լսելիս մտքումս եկան հետևյալ պատկերները…
Այս երաժշտությունը հոգեհարազատ էր / չէր իմ ներաշխարհին և ապրումներին:	Այս երաժշտությունը հոգեհարազատ էր / չէր իմ ներաշխարհին և ապրումներին:
Ստեղծագործությունն ինձ մոտ հանգստություն / լարվածություն առաջացրեց:	Ստեղծագործությունն ինձ մոտ հանգստություն / լարվածություն առաջացրեց:

Աղյուսակ 2.

Ինչպես տեսնում ենք, հարցարանը պարունակում է հարցեր, որոնցում տրված միտքը պետք է շարունակի սովորողը, ինչպես նաև հարցեր, որոնք ընտրություն են պահանջում նրա կողմից: Այն հարցերը, որոնցում պատասխանը շարունակում է սովորողը, թույլ են տալիս բացահայտել նաև նրանց գեղագիտական տերմինների իմացության մակարդակը, ինչպես նաև զգացմունքները ճշգրիտ արտահայտելու կարողությունը, այսինքն՝ հույզերի իմաստավորման գործընթացը (Crickmore, 2017): Ստացված արդյունքները պետք է վերլուծվեն յուրաքանչյուր սովորողի հուզական արձագանքը և ընկալումը անհատապես բացահայտելու համար, այլ ոչ թե դրանց գումարի և տոկոսային հարաբերակցության շնորհիվ: Սա կապված է դեռահասի՝ որպես անհատականության, սուբյեկտիվ զգացմունքային աշխարհի և դրա դրսևորումների հետ, որը չի պարտադրում նմանատիպ արդյունքներ այլոց մոտ: Յուրաքանչյուր սովորողի գրանցած տվյալները վերլուծելուց հետո, կարող ենք տեսնել դասարանի՝ երաժշտության հանդեպ հուզական արձագանքի, գեղագիտական և երաժշտական ընկալման և ճաշակի զարգացվածության մակարդակը:

Յուրաքանչյուր սովորողի կողմից տրված պատասխանները չափվում են ըստ հետևյալ ցուցիչների.

Սովորողի զգացմունքայնության մակարդակ	**Գնահատում**

Սովորողի վարքային դրսևորումները, դեմքի արտահայտությունը արտացոլվում են ունկնդրված երաժշտական ստեղծագործությունների բնույթին համապատասխան	0, 1, 2, 3
Սովորողը ցուցաբերում է զգացմունքայնություն և հետաքրքրություն ստեղծագործության հանդեպ, սակայն չի կարողանում դրանք արտահայտել	0, 1, 2, 3
Սովորողը գիտակցում է յուրաքանչյուր ստեղծագործության բնույթը, կերպարային առանձնահատկությունները, սակայն չի ընկալում դրանում ներդրված զգացմունքային աշխարհը	0, 1, 2, 3
Սովորողը անտարբեր է թե՛ երաժշտության բնույթի, զարգացման, թե՛ իր զգացմունքները արտահայտելու գործում:	0, 1, 2, 3

Աղյուսակ 3.

Գեղագիտական զգացմունքների չափման համար մեծ նշանակություն ունեն ոչ միայն հուզական արձագանքը երաժշտությանը և հույզերի ճանաչման ու արտահայտման գործընթացները, այլև հուզական էմպաթիայի գործընթացը (Ларина, 2016): Հատկապես երաժշտական արվեստի նկատմամբ, որտեղ ներդրված են թե՛ կոմպոզիտորի, թե՛ այն կատարողի խորը զգացմունքներն ու ապրումները: Այս առումով անհրաժեշտ է պարզել, թե որքանով են սովորողները կարողանում ապրումակցել այդ զգացմունքներին, զգալ դրանք որպես սեփական ապրումներ, որոնք կօգնեն արտահայտել համապատասխան զգացմունքներ: Սա ոչ միայն երաժշտության հանդեպ գեղագիտական կամ հակագեղագիտական վերաբերմունք է, այլ անձի կողմից դրա խորը ընկալում, զգացմունքների ճանաչում, ապրումակցում և արտահայտում:

Երաժշտություն առարկայի ուսուցման գործընթացում դեռահասների կողմից երաժշտական ստեղծագործության հանդեպ հուզական ապրումակցման մակարդակը ախտորոշելու նպատակով առաջարկում ենք հետևյալ չափումներն ու ցուցիչները:

Սովորողների համար ընտրում ենք հետևյալ ստեղծագործությունները՝

V-VII-դասարաններ – Ս. Պրոկոֆև - «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթը, որտեղ յուրաքանչյուր երաժշտական կերպար ունի վառ մարմնավորում երաժշտական տարբեր գործիքների միջոցով:

VIII-IX-դասարաններ – Ա. Տիգրանյան - «Անուշ» օպերան, որը ազգային երաժշտության հիմնաքարն է, որտեղ ներկայացվում են հայ հին ազգային բարքերը գլխավոր հերոսների ճակատագրի միջոցով: Այն լիովին համապատասխանում է այս տարիքում գտնվող սովորողների զգացմունքային աշխարհին և գիտակցության մակարդակին:

Ստեղծագործություններին մանրամասն ծանոթացնելուց հետո նրանց հանձնարարվում է բեմադրել դրանք, որտեղ յուրաքանչյուր աշակերտ ինքն է ընտրում, թե որ կերպարը պետք է մարմնավորի: Բեմադրությունը կայանում է առանց ձայնի, ցույց տալով միայն հերոսների ապրումները: Սա մեզ օգնում է հասկանալ, թե որքանով է աշակերտը ընկալել կերպարի առանձնահատկությունները, հոգե-հուզական վիճակը և ցույց է տալիս, թե որքանով է նա ապրումակցում տվյալ հերոսի հուզական վիճակին:

Բեմադրությունից հետո սովորողներին տրվում է հարցարան, որն ընդգրկում է հետևյալ հարցերը.

1. Դու ինչպե՞ս կվերնագրեիր այս ստեղծագործությունը, եթե լինեիր կոմպոզիտորը:
2. Ըստ քեզ ստեղծագործության միջոցով արտահայտվե՞լ էին կոմպոզիտորի զգացմունքները, եթե այո, ո՞ր հատվածներում դա ավելի շատ զգացվեց:
3. Ի՞նչ կանեիր դու, եթե լինեիր քո կերտած դերակատարի փոխարեն:
4. Ըստ քեզ ի՞նչ էր զգում տվյալ հերոսը պատմության ընթացքում:
5. Ի՞նչ ձևով դու կավարտեիր այս երաժշտական պատմությունը, եթե լիենիր կոմպոզիտորը:
6. Հորինի՛ր փոքրիկ մեղեդի, որը ցույց կտա քո կերտած հերոսի զգացմունքները պատմության ընթացքում:

Հարցարանի և բեմադրության արդյունքները չափում ենք հետևյալ ցուցիչներով.

Հուզական ապրումակցման մակարդակ	**Գնահատում**
Սովորողը ընկալում է երաժշտական ստեղծագործության զգացմունքային աշխարհը, որը ներդրել է կոմպոզիտորը, կարողանում է արտահայտել հերոսների գեղագիտական զգացմունքները,	Բարձր-3

հույզերը և ապրումները, ունենալով նույն զգացմունքները:	
Սովորողը ընկալում է երաժշտության բնույթը, զգացմունքային և հուզական դաշտը, սակայն չի կարողանում արտահայտել կոմպոզիտորի և դերակատարի զգացմունքները, ինչպես սեփականը:	Միջին-2
Սովորողը չի կարողանում ընկալել երաժշտական ստեղծագործության մեջ արտացոլված գեղագիտական զգացմունքները, կոմպոզիտորի և հերոսների ապրումները, առավել ևս դրանք արտահայտել:	Ցածր-1
Սովորողը անտարբեր է դասարանում իրականացվող աշխատանքի նկատմամբ, չի ցանկանում ընկալել և ներգրավվել գործունեության մեջ:	Բացասական-0

Աղյուսակ 4.

Գեղագիտական զգացմունքների հաջորդ կարևոր բաղադրիչի՝ գեղագիտական գնահատման մակարդակը պարզելու համար առաջարկում ենք կիրառել դրա չափման հետևյալ միջոցը: Որպես ունկնդրման նյութ կարող ենք առաջարկել Կոմիտասի Գարունա և Սոնա յար ստեղծագործությունները: Առաջինը բնույթով խոր հուզական, անչափ զգացմունքային է, իսկ երկրորդն ավելի աշխույժ է և թեթև: Կատարված երաժշտական գործունեությունից հետո սովորողներին տրվում են հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ տպավորություններ ստացար յուրաքանչյուր ստեղծագործությունից, արտահայտիր մեկ բառով:
2. Ո՞ր երաժշտությունը քեզ մոտ առավել հուզմունք առաջացրեց:
3. Գնահատիր յուրաքանչյուր ստեղծագործությունը 1-5 բալերով և բացատրիր, ինչու՞ ես այդպես մտածում:

4. Ստեղծագործությունների ո՞ր հատվածները ստիպեցին ավելի խորը ապրումներ ունենալ:

Սովորողների կողմից տրված պատասխաններից կարելի է հասկանալ, արդյո՞ք նրանց ստացել են որոշակի տպավորություն երաժշտական գործունեությունից, որոնք իրապես կապված են նրանց զգացմունքային աշխարհի հետ, թե՞ պատասխանները պարզապես մտածված են և ոչինչ չեն արտահայտում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով դեռահասների գեղագիտական զգացմունքների ձևավորման չափման ցուցիչների մշակումը՝ կարելի է եզրակացնել, որ երաժշտության ուսուցման գործընթացում գեղագիտական դաստիարակությունը դադարում է լինել վերացական հասկացություն, երբ այն հիմնված է հստակ չափելի չափանիշների վրա: Մշակված ցուցիչները հնարավորություն են տալիս ոչ միայն գնահատել աշակերտի գիտելիքների մակարդակը, այլև տեսնել նրա հուզական զարգացման դինամիկան, երաժշտական ճաշակի ձևավորումը և վերաբերմունքը արվեստի արժեքների նկատմամբ: Սա թույլ է տալիս ուսուցչին անհատականացնել ուսուցման մեթոդները՝ դրանք համապատասխանեցնելով դեռահասի ներքին աշխարհին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ларина А. Т. (2016). Эмоциональный интеллект. Московский городской педагогический университет, Москва, Россия.

Шестова М. А. (2021). Экспериментальная эстетика и эстетические эмоции: обзор западных трендов. Москва, Россия.

Шестова М. А., Забелина М. Р., Васильченко У. И., Анохина К. В., Волдинер Е. А. (2024). Апробация шкалы эстетических эмоций на российской выборке. *Психологический журнал, 45*(3), URL: https://journals.rcsi.science/0205-9592/article/view/261996

Холиков К. Б. (2023). Измерение эмоции при разучивании музыки, функция компонентного процессного подхода психологического-музыкального развития. Turkistan Innovative University.

Crickmore L. (2017). The measurement of aesthetic emotion in music. *Frontiers in Psychology, 8*, 651, https://doi.org/10.3389/fpsyg.2017.00651

Perlovsky L. (2014). Mystery in experimental psychology: How to measure aesthetic emotions? *Frontiers in Psychology, 5*, 1006. https://doi.org/10.3389/fpsyg.2014.01006

REFERENCE LIST

Larina A. T. (2016). Emotsional'nyy intellekt *(Emotional intelligence)*. Moskovskiy gorodskoy pedagogicheskiy universitet, Moskva, Rossiya.

Shestova M. A. (2021). Eksperimentalnaya estetika i esteticheskie emotsii: obzor zapadnykh trendov *(Experimental Aesthetics and Aesthetic Emotions: A Review of Western Trends)*. Moskva, Rossiya. DOI: отсутствует

Shestova M. A., Zabelina M. R., Vasilchenko U. I., Anokhina K. V., Voldiner E. A. (2024). Aprobatsiya shkaly esteticheskikh emotsiy na rossiyskoy vyborke *(Testing the aesthetic emotions scale on a Russian sample)*. Psikhologicheskiy zhurnal, 45(3), URL: https://journals.rcsi.science/0205-9592/article/view/261996

Kholikov K. B. (2023). Izmerenie emotsii pri razuchivanii muzyki, funktsiya komponentnogo protsessnogo podkhoda psikhologicheskogo-muzykalnogo razvitiya *(Measuring emotion in music learning, a function of the component process approach to psychological-musical development)*. Turkistan Innovative University.

Crickmore L. (2017). The measurement of aesthetic emotion in music. *Frontiers in Psychology, 8*, 651, https://doi.org/10.3389/fpsyg.2017.00651

Perlovsky L. (2014). Mystery in experimental psychology: How to measure aesthetic emotions? *Frontiers in Psychology, 5*, 1006. https://doi.org/10.3389/fpsyg.2014.01006

РЕЗЮМЕ

ПОКАЗАТЕЛИ ФОРМИРОВАНИЯ ЭСТЕТИЧЕСКИХ ЧУВСТВ ПОДРОСТКОВ НА УРОКАХ ПРЕДМЕТА «МУЗЫКА»

Лала Симонян

Сложный структурный характер эстетических чувств свидетельствует о том, что для их измерения одного или двух методов недостаточно, хотя многие авторы ограничивались лишь отдельными показателями или использовали один тип опросника. Особенно в условиях взаимодействия искусства, в данном случае музыки, необходимо рассматривать методы измерения чувств как в психологическом и эстетическом контексте, так и в рамках музыкального искусства, а также в процессе их возникновения и проявления в различных видах деятельности.

В рамках нашего исследования были изучены различные измерительные показатели в области эстетического опыта, надежность и эффективность которых были экспериментально проверены и подтверждены известными представителями современной психологии. На основе существующих методов измерения эстетических чувств в процессе преподавания предмета «Музыка» в общеобразовательной школе нами была разработана комплексная система показателей их измерения, соответствующая целям нашего исследования, которая представлена в данном подразделе. Исходя из многофакторной направленности модели формирования эстетических чувств, становится очевидно, что мы измеряем несколько компонентов. Важны не только эмоциональное отношение и реакция на музыку, но и уровень эстетического восприятия, оценочные способности и осмысление.

Ключевые слова: *музыка, эстетические чувства, эмоция, эстетическое восприятие, показатель, подросток, восприятие, оценивание.*

SUMMARY

INDICATORS OF THE FORMATION OF ADOLESCENTS' AESTHETIC FEELINGS IN "MUSIC" LESSONS

Lala Simonyan

The complex structural nature of aesthetic feelings indicates that a single or even two measurement methods are not sufficient to assess them, although many authors have relied only on individual indicators or used a single type of questionnaire. Especially in the context of the integration of art in this case, music it is necessary to consider methods of measuring these feelings both in psychological and aesthetic contexts, as well as within the

framework of musical art, including their emergence and manifestation in various types of activities. In our study, several measurement indicators in the field of aesthetic experience were examined, the reliability and effectiveness of which have been experimentally tested and confirmed by prominent representatives of modern psychology. Based on existing methods for measuring aesthetic feelings in the process of teaching the subject “Music” in general education schools, we developed a comprehensive system of measurement indicators aligned with the objectives of our research, which is presented in this subsection.

Given the multifactorial nature of the model of aesthetic feeling formation, it becomes clear that we measure several components. Not only emotional attitude and response to music are important, but also the level of aesthetic perception, evaluative abilities, and meaning-making.

Keywords: *music, aesthetic feelings, emotion, aesthetic perception, indicator, adolescent, perception, evaluation.*

Հոդվածը ստացվել է՝ 09.03. 2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 14.03. 2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 16.04.2026